ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 30 հունիսի 2016Ã.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբª Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով Մարիամ Լալայանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Մարիամ Լալայանը 14.06.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան խնդրելով՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, 83-րդ հոդվածին հակասող եւ անվավեր»:

Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Վանաձորի կենսաթոշակային ապահովագրական տարածքային կենտրոնի կողմից /այսուհետ՝ պատկան մարմին/ 2003 թվականից դիմողին նշանակվել է կենսաթոշակ, որն ստացել է մինչեւ 2004

թվականի մարտ ամիսը, որից հետո վերջինս գրավոր դիմել է պատկան մարմնին իր հասանելիք ամենամսյա թոշակն իր բանկային հաշվին փոխանցելու խնդրանքով՝ այդ գումարները կուտակելու մտադրությամբ, եւ երկար ժամանակ չի ստուգել կուտակման գործընթացը: Սակայն որոշ ժամանակ անց, ավելի ստույգ՝ 2013 թվականին դիմողին հայտնի է դառնում, որ ինքը 2012թ. հունիսի 1-ից զրկվել է կենսաթոշակ ստանալու իրավունքից՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով, ըստ որի՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չի վճարվում: Այնուհետեւ դիմողը դիմում է Վանաձորի կենսաթոշակային ապահովագրական տարածքային կենտրոնին՝ խնդրելով վերականգնել 2004 թվականից մինչեւ 2013 թվականի 8-րդ ամիսն ընկած ժամանակահատվածի համար իր կենսաթոշակ ստանալու իրավունքը, որը կենտրոնի կողմից մերժվել է վիճարկվող՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիմքով, ինչը դիմողի համար հիմք է հանդիսացել դիմելու դատական ճանապարհով իրավունքների վերականգնմանը: Սակայն դատարանները նույնպես մերժել են դիմողի պահանջը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը վտանգում է թե՛ կենսաթոշակ ստանալու, թե՛ անձի սեփականության իրավունքը: Ըստ դիմողի՝ ինքը սեփականության իրավունքով իրեն պատկանող դրամական միջոցներից հրաժարվելուն ուղղված որևէ գործողություն չի կատարել և ընդամենը որոշել է իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը տիրապետելու եղանակը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով նախատեսված իրավակարգավորման պայմաններում իր համար ստեղծվել է բացասական եւ անհաղթահարելի իրավական վիճակ, ինչի արդյունքում ինքը զրկվել է միաժամանակ երկու սահմանադրական՝ ծերության սոցիալական ապահովության եւ սեփականության իրավունքներից:

Միաժամանակ, դիմողը միջնորդություն է ներկայացրել՝ պետական տուրքի վճարումից իրեն ազատելու վերաբերյալ:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ առկա չեն Մարիամ Լալայանի դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Մարիամ Լալայանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Մարիամ Լալայանին ազատել պետական տուրքի վճարման պարտականությունից:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

30 հունիսի 2016 Ãí ³ Ï ³ ÝÇ
ê ¸ ¸ Î à/2-19